

ԳԷՈՐԳ ՉԱԻՈՒՇ

ԵՐԵՒԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ

ԵՐԵՒԱՆ 1992

ՌՈՒԲԷՆ ՋԱՐԴԱՐԵԱՆ

Գեորգ Չաուշ, Երեւանի պետ. համալս.
Եր.: Երեւանի համալս. հրատ., 1992.-40էջ.

Գրքոյկն ամփոփում է նշանաւոր գրող ու հասարականքադաքական գործիչ Ռ. Ջարդարեանի ակնարկը հայ ազատագրական շարժման խոշորագոյն ներկայացուցիչ, ազգային հերոս Գեորգ Չաուշի կեանքի ու դիւցազնական գործունէութեան մասին՝ մեծ ներշնչումով ու խորին ակնածանքով գրուած ու առաջին անգամ հրատարակուած հերոսի նահատակման թուականին (1907) Ժնեւում: Տպագրուում է 1967 թ. Բեյրութի հրատարակութիւնից: Զետեղուած են նաեւ Չաուշի երկու նամակները:

4702080101
Ջ<-----
704(02)92

5-8084-0210-7
ՌՈՒԲԷՆ ՋԱՐԴԱՐԵԱՆ

ԳԷՈՐԳ ՉԱԻՈՒՇ
Հրատարակչութեան խմբագիր՝ Ջ. Ն. Թամրազեան
Գեղարուեստական խմբագիր՝ Ն. Ա. Թովմասեան
Տեխն. խմբագիր՝ Հ. Հ. Խաչատրեան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Վ. Ղազարեան

Յանձնուած է շարուածքի 20.07.1992 թ.: Ստորագրուած է տպագրութեան 08.09.1992 թ.:
Չափսը՝ 60X84 1/32: Թուղթ տպագր. Թիւ 2: Տառատեսակը՝ Լորքե: Տպագրութեան եղանակը
,Բարձրե: Հրատարակչական 1,2 մամուլ: Տպագրական 1,25 մամուլ= 1,16 պայմանական
մամուլի: Տպաքանակ 4000: Պատուէր 159: Գինը՝ 5 ռուբլի:

Երեւանի համալսարանի հրատարակչություն, Երեւան, Ալեք Մանուկեան փ. Թիւ 1:

Երեւանի համալսարանի տպարան, Երեւան, Աբովեան փ. Թիւ 52:

Բովանդակություն Յաջորդ էջ

ԳԵՈՐԳ ՉԱԻՈՒՇԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հազար ինն հարիւր եօթ թուականին,
Չքնաղ Մայիսի քսանըեօթին,
Տօն է բազմաշխատ մահուան Գեորգի
Սասնոյ հարազատ մեծանուն քաջին:

Թնդաց սրտերը տասնեակ քաջերուն,
Կռուեցան անվերջ, մինչեւ իրիկուն,
Իսկ երբ գիշերը, Գեորգը շակած,
Գիւղէն դուրս ելան յոգնած ու տրտմած,

Ճամբան աղաչեց, քաջն մահամերձ,
Հանգիստ ձգէ ք զիս մի՛ ընէք շնչահեղձ,
Դրէ՛ք զիս այստեղ, ծածկեցէք խոտով,
Գացէ՛ք, ընկերներ, դուք գացէ՛ք բարով:

Վերջին բարեւներս տարէ՛ք հայ ազգին,
Վերջին համբոյրներս որդոյս Վարդգէսին
Լացին ընկերներ, կանգնեցան շարքով,
Համբուրեցին զինք ու անցան խմբով:

Նայեց բոլորտիք, ա՛լ չկայ ընկեր
Ինկած կռուի դաշտ, տառապ ու անտէր,
Համբուրեց հողը քաղցր հայրենեաց
Փակեց աչքերը ներքեւ աստեղաց:

Նախորդ էջ Բովանդակություն Յաջորդ էջ

Copyright: YEREVAN STATE UNIVERSITY - ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Երկու Խօսք

Գեորգ Չաուշին նուիրուած այս գրքոյկը Ռ. Զարդարեանի գրչին կը պարտինք: Գրքոյկը հրատարակուած է 1907ին, Ժընէ:

Զարդարեան խոր ապրումներվ կը հետեւէր ԴուրանԲարձրաւանդակի հերոսական շարժումներուն եւ մեծ հիացմունք ունէր Գեորգի անօրինակ խիզախումներուն հանդէպ:

1907 Մայիս 27-ին տեղի ունեցաւ Սուլուխի ճակատագրական կռիւր: Գեորգ կուրծքէն ծանրօրէն վիրաւորուեցաւ եւ Մայիս 28-ին շիջեցաւ Սասունի այս հրաբուխը:

Ռ. Զարդարեան, ճիշդ ամիս մը յետոյ, 1907 Յունիս 27-ին, ,Ռազմիկէի մէջ կը գրէր.

,Անխոցելի դիւցազն ալ մահ ունի եղեր: Արցունքը կը խեղդէ մեզ. մահ մը չէ ասիկա, այլ ամբողջ աշխարհի մը արեւին խաւարումը, Սասնոյ ու Տարօնի երկրին զուլումը: Հազիւ թէ վերջին քառորդ դարու մէջ հայ մայր մը իր կուրծքին վրայ դիեցուցած ըլլար կիսաստուած մը, այսքա՛ն անթերի դիմագիծով, յանդգնութեան, անձնուիրութեան, դիւցազնական անսպառ զօրութեան ա՛յսքան հրաշալի, ա՛յսքան աստուածամերձ ձիրքերովէ:

Հայ ազատագրական շարժման ճակատագրական թուական մը եղաւ Մայիս 27-ի արիւնալի ճակատամարտը: Գեորգի նահատակութիւնը զուգահիւ պեցաւ Մայիս 28-ին, որպէս մատաղ Հայոց ազատութեան եւ անկախութեան:

Տասնմէկ տարի ետք, 1918 Մայիս 28-ին, հայ կորովի բազուկը Սարտարապատի ճակատամարտը պիտի մղէր, Գեորգ Չաուշի ճանապարհով. ու Մայիս 28-ը որպէս անկախութեան թուական, յաւիտենական դրօշագարդում մը պիտի մնար Սարերու Ասլանի աճիւնին:

1907 Մայիս 27-ի կռուին, դիտապաստ կ'իյնար Քէօսէ պինպաշին, թուրք զօրքերու ամենակարող հրամանատարը: Անոր թաղումը կը կատարուէր զինուորական նուագախումբով:

Օր մը ետք, Գեորգ Չաուշի մարմինը Սուշ կը բերէին, որպէսզի հաւատան թէ հայ դիւցազնը նահատակուած է:

Հերոսին թաղումը կատարուեցաւ հայ աշակերտներու եւ կղերականներու շքերթով, կառավարութեան կարգադրութեամբ: Մշոյ ժողովուրդը տուները քաշուած էր, կոտորածի վախէն: Ու ինչ որ զարմանալի է, կառավարական նուագախումբը հետեւեցաւ Գեորգի դագաղին, նուագեց Շոփէնի մահերգը, ինչ որ ըրած էին թուրք զօրավարին:

Գեորգը թաղուեցաւ Ծիրինկատարի ստորոտը, հայ գերեզմանոցին մէջ:

Թուրքերը հանգստացան: Փոթորկայոյց Գեորգ՝ ոչ եւս էր իրենց համար:

Հայերը չհաւատացին որ Սարերու Ասլանը սպաննուած է: Ու նեղ օրերուն միշտ կը սպասէին, որ անոր ձայնը Ծովասարէն պիտի լսեն:

Երբ Գեորգ Չաուշի նահատակութեան լուրը կը հասնի Պուլկարիա, մեծ յուզումի կը մատնուի Անդրանիկ: Հրաչ Զարդարեան վերջերս ինձի ուղղած երկտողի մը մէջ կը վկայէ.

,Անդրանիկ որ յօդացաւով կը տառապէր եւ անկողին կը մնար Գեորգ Չաուշի մահուան լուրը առնելէն ետք դէմքը պատին դարձուց եւ երէք օր մարդու հետ չխօսեցաւ: Հայրս ու մենք փոքրիկներս կը զգայինք անոր հոգեկան տառապանքը... և

Անդրանիկ բոլորէն աւելի լաւ կը ճանչնար Գեորգը եւ անոր անչափելի խիզախութիւնը: Գեորգը հայ ազատագրական շարժման մարտական ուժի գերագոյն խորհրդանիշն էր: Որքա՛ն մարտիկներ, Գեորգի հմայքէն ոգեւորուած՝ ֆետայի դարձան ու անմահ անուն մը թողին Հայոց յեղափոխութեան պատմութեան մէջ:

Անմահութեան փառապսակը ճակատին, Գեորգ միշտ ներկայ էր Տարօնի եւ Սասնոյ ժողովուրդի հոգիին մէջ:

Կ. ՍԱՍՈՒՆԻ
28 Մայիսի 1967

Նախորդ էջ Բովանդակութիւն Յաջորդ էջ

Copyright: YEREVAN STATE UNIVERSITY - ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԳԷՈՐԳ ՉԱՒՈՒՇ

1885-ին, առաւօտ մը, Սասնոյ սարէն լեռնցի մը կ'իջնէր դէպի վար: Քովն ի վեր կը քալէր պատանի մը՝ պայծառ, լուսաւոր ճակատով եւ կրակոտ, համարձակ աչքերով: Հայր ու տղայ էին: Կ'երթային դէպի, Առաքելոց վանքը:

Աստուած օգնակա՛ն, Հայր սուրբ:

Հոգուդ պահապա՛ն, զաւա՛կս:

Մեննիմ քեզիք, Հայր Սուրբ էտա զիմ լաճ բերեր եմ վանք կարդալ սովրելու, միս քեզի՛ք, կաշին ու ոսկոր ինձի՛ք:

Այդ միսն ու ոսկորը Գեորգինն էին, որու հայրը գրին ու գրքին երկիւղած պաշտամունքովը՝ կը բերէր իր զաւակը ահա Առաքելոց վանքի դպրութեան տաճարին, իբրեւ մատաղ:

Տասնէւչորս տարեկան էր այն ատեն Չաուշը, հազիւ խելահաս ու գիտակից այդ ճակատագրական նուիրումին՝ որ կը բանար կեանքի առաջին խորհրդաւոր կամարը իր առջեւ եւ որմէ ետք դեռ պիտի բացուէին նոր ու անձանօթ կամարներ՝ լի մրրկայոյզ անակնկալներով ու գահավէժներով, լի պայքարով, փոթորիկով ու ալեկոծութեամբ:

Դժուար թե չորս հսկայ պարիսպներով շրջապատուած այդ դարաւոր մենաստանը կարողանար պահել իր մէջ Բսանաց գաւառի ըմբոստ գաւակը, եթէ այդ մենաստանը՝ Առաքելոց վանքը չ'ըլլար միայն, ուր լեռնական մատաղ բայց խրոխտ հոգիները՝ հեռո՛ւ միստիքական թելադրութիւններէ, կու գան սնանիլ քիչ մը լոյսով ու ձգտիլ դարձեալ իրենց սարերու կոյս ազատութեանը:

Չորս տարի մնաց Գեորգը վանքին մէջ եւ այդ դպրոցական չորս տարիները եղան նոյնքան արկածալից ու անհանդարտ, որքան իր կեանքի հետագայ տարիները, կոյի՛ւ քիւրդ լաճերու հետ՝ որ կը համարձակէին վանքի գառնուկները գողնալ, կոյի՛ւ քիւրդ հովիւներու հետ՝ որ կը բերէին իրենց նախիրը արածելու վանական արօտներու վրայ:

Այս միջոցներուն էր ահա, որ վանքի շուրջը հանդիպեցաւ Արաբոյին ու ընկերներուն եւ առաջին անգամ լսեց, ընկերութիւնէ խորհրդաւոր բառը: Ոգորումի, արկածի էւ խռովքի ծարաւի իր հոգւոյն խորը արթնցան առաջին դիւցազնական բնագոյները այս հանդիպումէն՝ որ ներշնչեց իրեն անձնավստահութիւն ու յանդգնութիւն: Եւ սրտովին կապուեցաւ Արաբոյին, Լեւոնին ու ընկերներուն, որոնց գաղտնաբար կերակուր կը տանէր վանքէն:

Անձանօթ գրգիռ մը նեղել կը սկսէր իր պատանի զգացումները եւ անհրապոյր, հետզհետէ անտանելի կը դարձնէր իրեն՝ վանքն ալ, դպրատունն ալ, դասագիրքն ալ:

Վրայ հասաւ Կիլիզարի ողբերգական դէպքը եւ Մուսապէկի խժոժութիւնները, որոնք ցնցեցին Տարօնը:

Դժոխք դարձաւ վանքը: Գեորգ կապեց տրեխները, վերցուց ճոկանը ու առաւօտ մը նորէն իր լեռնաշխարհը բարձրացաւ:

Մքտինքն է հիմա, իր պապենական օրհնեալ օճախը:

Մքտինքը, Գեորգի այդ ծննդավայրը, Բսանաց գաւառի այն գիւղն է՝ Պէրմի հետ, որ սնուցած է Սասնոյ յայտնի կտրիճները եւ խանձարուրը օրօրած է այն քաջարի ասպետներուն, որոնք իրենց քաջագործութեան համբաւովը լեցուցած էին երկիրը:

Վարպետ եւ անվեհեր որսորդներ են հոն ամէնքն ալ, այդ վայրի ու խրոխտ աշխարհին մէջ՝ որ թօթափած իր վրայէն լոյս ու բուսականութիւն՝ ժայռ ու ապառաժ է կտրած: Ոչ մէկ քնքշութիւն, ո՛չ մէկ փափկութիւն, բնութեան ո՛չ մէկ թեթեւ նազանք. սեպ կատարներուն վրայէն՝ որ կը փայլին արեւուն դէմ, կ'անցնին քարայծները հովի պէս արագ եւ օդին մէջ կը լսուի արծիւին հզօր թելերուն թափահարումը. յարածամ, տեւականօրէն տարերային պայքարը կը լարէ կենդանին կենդանիին, քիւրդը հայուն եւ հզօրը տկարին դէմ: Վա՛յ տկարին, վա՛յ անգօրին:

Գեորգին հայրը համբաւաւոր որսորդ էր, որուն աչքերը դժբախտութիւն ունեցան տարիներ յետոյ լոյսէ զրկուելու: Գեորգին կը մնար, ուրեմն՝ սպաննելու համար լերան ձանձրոյթը, հօրը հրացանը շալկել եւ թափառիլ մացառներուն ետեւ, ապառաժներուն վրայ եւ որսալ ինչ որ հանդիպէր: Առտուն կանուխ դուրս գալով տանէն՝ իրիկունը մութին հետ տուն կը մտնէր:

Վանքեն, վարի աշխարհեն, Արաբոյէն ու ընկերներէն արդէն բաժնուած էր աւելի ըմբոստ, աւելի խիզախ: ,Ընկերութիւնէ բառը մոզական ազդեցութիւն ըրած էր անոր մտքին վրայ, որ կը մղէր զինքը իր շուրջը խմբելու երիտասարդ ընկերներ եւ պատրաստելու գանոնք:

Եւ մանուկ ,ընկերութիւնը պատանի այդ ըմբոստներուն՝ յափշտակուած Արաբոյի, Լեւոնի քաջագործութիւններով՝ անդադար կռուի մէջ էր քիւրտ լաճերու հետ, առաջնորդ ունենալով Գէորգը:

Բայց հազիւ տարի մը կը տեւէ այս ազատ, ինքնիշխան կեանքը՝ երբ տարօրինակ միջադէպ մը եկաւ յայտնելու թէ այս պատանիին մէջ կազմուած էր արդէն պինդ եւ անկախ նկարագիր մը, որ կը շեշտէր անոր ըմբոստ անհատականութիւնը:

Իրիկուն մը տուն վերադարձին, հայրը բարկացաւ իրեն եւ արգիլեց իր հրացանը գործածել այլեւս:

Վա՛յ, այդպէ՛ս, հա՛, ըսաւ Գէորգ, թող այս օճախը ինծի հարամ ըլլայ մինչեւ որ ես ինծի համար հրացան մը չգտնեմ:

Գեղեցիկ հրացան մը ամբողջ հարստութիւն մը, թագաւորութիւն մը կ'արժէ Մասնոյ լեռներուն վրայ: Ո՛ր գտնել:

Գէորգ վար իջաւ սարէն, ջորեպանի մը հետ գնաց շիտակ Հալէպ՝ դրամ վաստկելու, որպէսզի հրացան մը գնէ: Հազիւ վեց ամիսի չափ մնաց հոն, որովհետեւ ազգականները իր հաւնած հրացանը գնեցին, տուին իրեն ու վերադարձուցին հայրենիք:

Երբ տուն դարձաւ ու դռնէն ներս մտաւ, իր ,պռահիմփաշաէ չախմախլի հրացանը հօրը առջեւ դրաւ ու ըսաւ՝

Վատ դրացին մարդս գործիքի տէր կ'ընէ...

Ճիշդ է, ոչ միայն գործիքի տէր եղաւ, այլեւ գտաւ իր բացարձակ անկախութիւնը:

Այս պահուն արդէն 1890 թուականն էր, որ կը բանար հայկական յեղափոխութեան արիւնտ շրջանը, եւ դեռ յեղափոխական առաջին քարոզիչները Մասնոյ լանջերուն վրայ չերեւցած՝ արդէն Գէորգը, ինքնաբերաբար, իրերու բռնութեամբը, շրջապատող պայմաններուն դէմ ըմբոստ՝ կը հրաւիրէ զիւղացի երիտասարդութիւնը ,ո՛չ խարճ, ո՛չ ալ խարաճ տալ կառավարութեանէ:

Ու երբ Տամատեան Մասնոյ վրայ ոտք կոխեց՝ Գէորգը եղաւ անոր առաջին ընկերը, անոր վստահելի ու ամենէն անխոնջ գործակիցը, ինչպէս նաեւ տեղին պայմաններուն աւելի ծանօթ ու իրազեկ ուղեցոյցը:

Հագիլ թէ տարուան մը կազմակերպական աշխատութիւնը վատնուած էր, եւ ահա վրայ հասաւ Տալուրիկի՝ 92 թուականի մեծ կռիւը: Քիւրտ աշիրէթները ահագին ուժով ինկան Տալուրիկի վրայ:

Այս կռիւին մէջ որուն մասնակից էր նաեւ Հրայրը- Գէորգ, հակառակ իր փոքր տարիքին ու փոքր հասակին, ցոյց տուաւ այնպիսի քաջութիւն, այնպիսի արտակարգ հանդգնութիւն, որ Տալուրիկի ամենէն փորձառու ու տարեց ռազմագէտներուն հիացումը եւ զարմանքը գրաւեց: Կռիւր բռուն ու օրհասական էր, որովհետեւ, երկրորդ օրը, թշնամին օգնութիւն ստացած եւ ուժովցած՝ գրոհ կու տար, եւ տալուրիկցիները կը պատրաստուէին նահանջել դէպի Ֆրոֆըրո քարը: Խուճապ մը ոչ միայն պէնամուս պիտի հանէր ամբողջ Տալուրիկը, այլ նաեւ աղիտալի ջարդի մը պիտի մատնէր 6700 ընտանիք: Գէորգը՝ Փրիսվայ Տէր Գաբրիէլ քահանային հետ՝ կոնակ կոնակի հերոսաբար շարունակեցին դիմադրութիւնը եւ իսլեցին յաղթութեան փառքը:

Սասունը փրկուած էր եւ յաղթական:

Առաջին դափնին էր որ Գէորգը կը շահէր 21 տարեկան հասակին մէջ եւ իր անունը կը դարձնէր ժողովրդական ու սիրելի:

Անցաւ տարի մը: Կառավարութիւնը կը հետապնդէր Տամատեանը:

93ին ինքը Տալուրիկ կը գտնուէր, երբ գոյժ հասաւ թէ Սէմալի մէջ ձերբակալուած է Տամատեանը: Անմիջապէս հաւաքելով տալուրիկցիները՝ թռաւ դէպի Սէմալ հաւարի, սակայն ուշ էր արդէն, Տամատեանը իջեցուցած էին Մուշ: Այդ օրէն աւելի խոր աստելութեամբ ու վրէժխնդրութեամբ լեցուած դէպի բռնակալութիւնը, ուխտեց վար չդնել զէնքը եւ նուիրուիլ յեղափոխութեան, մինչեւ իր վերջին շունչը:

Եւ հաւատարիմ մնաց իր ուխտին:

Ի գո՛ւր կառավարութիւնը ձերբակալելով Տամատեանը՝ կը յուսար թէ ազատութեան աստղը Սասնոյ բարձունքներուն վրայ թեքուած եւ խաւարած ըլլար: Գէորգը հոն էր ընկերներով վառ պահելու նուիրական հուրը:

Երկար չտեւեց որ Մուրատ Էֆէնտին ինչպէս կ'անուանեն սասունցիները երկրորդ անգամ ըլլալով վերադարձաւ Կովկասէն, ուր գացած էր զէնք ու ռազմամթերք ճարելու: Գէորգ իր ընկերներուն՝ Կարապետի, Քոլոս Օհաննէսի, Ադամի ու միւսներուն հետ միացան Մուրատ Էֆէնտիին:

Սակայն դարձեալ դանդաղ, բայց անվհատ աշխատութիւնը՝ կազմակերպելու եւ համախմբելու մէկ գաղափարի շուրջ լեռնական այս արի ժողովուրդը, որ սակայն բաժա՛ն բաժա՛ն գիւղերու մէջ, յաճախ մինչեւ եսականութիւն հասնող ծայրայեղ անհատապաշտութեամբ մը եւ ցեղային ցաւալի հակակրութիւններով տարուած՝ կը դժուարացնէր հաւաքական ճիգն ու ընդհանուր գործակցութիւնը հասարակաց թշնամիին դէմ:

Դժբախտաբար այդ կիսանկախ, բռնակալութեան անմիջական ապականիչ դրացիութենէն հեռու ինկած սարերուն վրայ ալ վատութիւնը գոյութիւն ունէր: Այլ-Ձոնանի ռէսը՝ որ մատնած էր Արաբոն ու իր ընկերները, կը հետապնդէր այս անգամ Մուրատ Էֆէնտին ու Գէորգը, մինչեւ որ Գէորգի արդարակորով բազուկը վերջ տուաւ այդ սողունի կեանքին:

Վրայ հասան 94 թուականի մեծ օրերը:

Անթիւ, անհամար աշիրը պաշարեց Կելիէկուզանն ու Սեմալը, եւ սկսաւ սարսափելի՝, անհաւասար կռիւր՝ որ տեւեց տասը օր: Գէորգի ամբողջ մարտական խումբը կը բաղկանար 8 կտրիճներէ, բայց իր հետ էին աննման տալուրիկցի, սեմալցի, շէնրքցի ու կելիէկուզանցի. իսկ թշնամին անհամար էր:

Միայն սասունցին կարող էր ճակատ տալ այս տեսակ ահաւոր յարձակման մը եւ միայն՝ Գէորգին անվեհեր յանդրգնութիւնը կարող էր դէմ դնել եւ արհամարհել թշնամիին զօրութիւնը:

Տէ լեխըն, պոռայէ մըն, տէ լեխըն, զա՛րկ եղբայր, զա՛րկ, կը պոռար, իմտատը իմաստը շո՛ւտ կու գայ կը հասնի Ռուսաստանէն, մի կարծիր որ այս 5 սիրմալիով ու 2 խաբախլիով պիտի մնանք. եթէ մնանք ալ՝ յաղթութիւնը մերն է Մուրատ Էֆէնտին մեզի համար փամփուշտ կը լեցնէ. զարկէ՛ք, զարկէ՛ք անխնայ...:

Բայց Ռուսաստանը շատ հեռու էր եւ կռիւր օրհասական: Կառավարական զօրքը՝ որ սկիզբները հանդիսատես կը մնար լոկ յուսալով որ քիւրտ աշիրէթները կարող պիտի ըլլային շուտով յաղթականը տանիլ խաբուած իր հաշուին մէջ, նախ քիւրտ տարագով ծպտուած, յետոյ յայտնապէս՝ միացաւ բարբարոս խուժանին ու յարձակումը սաստկացաւ:

Քաջարի սասունցին կամաց-կամաց սկսաւ, նահանջել դէպի Տալուրիկ՝ առաջնորդութեամբ Գէորգի ու ընկերներուն: Փամփուշտները սպառած էին, ռազմական դիրքերը անցած թշնամիին ձեռքը, Սասնոյ բոլոր կիրճերն ու ճամբաները բռնուած՝ զօրքերէն ու քիւրտերէն: Դիմադրութիւնը անկարելի էր այլեւս շարունակել:

Գէորգը, Մուրատ Էֆէնտին ու շարք մը տալուրիկցիներ բռնադատուեցան ապաստանիլ Տալուրիկի Հարթ թաղին տակ գտնուող քարայրը՝ որ 10 րոպէով հեռու է Ձկնկուլ Քավէն: Թշնամին սակայն մատնութեան մը շնորհիւ, իմանալով թագստոցին տեղը՝ պաշարեց քարայրը, զօրքը վերէն գալով ու Փաթոռէ Կենճէն ալ իր աշիրով գետին միւս կողմէն: Ինքնապաշտպանութեան ոչ մէկ միջոց: Սակայն Գէորգը, Սասունի հպա րտ գաւազ, չուզելով զլուխ ծռել, հռացանը թշնամիին ուղղեց:

Վա՛ր դիր հրացանդ, ընկեր, խնդրեց Մուրատ Էֆէնտին հանդարտ, մենք մեր 40 փամփուշտով, կու՛ճ մը ջրով ու սակառ մը խաղողով չենք կրնար երկար դիմանալ, պէտք է համակերպիլ...:

Մուրատը, Գէորգն ու ընկերները ձերբակալուելով տարուեցան Սեմալի եկեղեցին, ուր չարչարանքի ու տանջանքի առաջին քստմնելի փորձերուն մկրտութիւնը կրեցին. մինչ

դուրսը, կապաններուն, կիրճերուն եւ Տալտրիկի գեղերուն մէջ կը լայնանար, կ'ընդհանրանար անասելի, ահաւոր եղերերգութիւնը Ջէքիի վայրագ հրամանատարութեամբ:

Մուշէն Պիթլիս եւ Պիթլիսէն դարձեալ Մուշի բանտը, երբ եղեռնադատ ատեանը վճռեց արդէն դատապարտութիւնը:

Տասնեւհինգ տարուան բերդարգելութիւն:

Գէորգին թուեցաւ թէ այդ կէանքը հազար անգամ անգութ ու անտանելի էր գերեզմանէն. կը տեսնէր արդէն որ բանտին մէջ իր երիտասարդութիւնը եւ կորովը եւ ինքնավստահութիւնը կորցնելով պիտի մնար միայն ստուեր մը նախկին ռազմիկ Գէորգէն:

Անկարելի էր համակերպիլ այս վախճանին:

Եւ սասունցին սկսաւ կրծել իր գառագեղին երկաթները: Ազատ լեռները կը տենչար:

Պէտք էր քանդել Սվարի դըշլասիինէ, Մուշի այդ անիծեալ բանտին վանդակները՝ թռչելու համար դարձեալ դէպի Մասնոյ սարերը, որոնց ազատ սարսուռը կը բերէր իր հետ քամին:

Մուրատը 3-րդ յարկն էր, Գէորգը 2-րդ յարկը, եւ իսստիւ արգիլուած էր յարաբերութիւն ունենալ: Մութ ու անարեւ նկուղին մէջ՝ առարկայ մշտական նախատինքի, գրկանքի, բանտային ստորերկրեայ տանջանքներու՝ մօտ երեք տարի համբերեց:

Առաջին օրէն երբ բանտի չորս պատերուն մէջ փակուեցաւ, յանդուգն, վտանգները չափող եւ անոնցմէ օգտուելու վարժ իր այքերը սրատեսութիւնն ունեցան արդէն նշմարելու այն հնարաւոր կէտը՝ որ կրնար անցք տալ իր փախուստին:

Իրեն լոյս տուող պատուհանը՝ պատշգամբաձեւ դուրս ինկած էր պատին երեսէն մէկ քանի թիզ եւ վանդակի մը պէս կը կախուէր բարձրութեան վրայ: Գէորգը հաշուեց որ էթէ կարելի ըլլար պատուհանը ծակել եւ յաջողութեամբ գործը գլուխ հանել, այն ատեն կը մնար միայն վար կախուիլ եւ անգամ մը ոտքերը գետին դնել... անկէ անդին ազատութիւնն էր:

Սկսաւ անշշուկ եւ մրջինի աշխատութիւնը գիշերուան մութին ու լռութեան մէջ՝ եւ ամէն առաւօտ հողը գրպանովը կը կրէր դէպի... ու կ'անհետացնէր. բանտային խուզարկուներէն թագուն պահելու համար Գէորգը գործադրեց ապշեցուցիչ հնարամտութիւն եւ խորագիտութիւն:

Աշխատութիւնը իր վախճանին կը մօտենար, բայց ուրիշ նոյնքան յամառ, նոյնքան հզօր մտահոգութիւն մը ունէր: Ինչպէ՞ս փախչիլ բանտէն՝ առանց Մուրատ Էֆէնտիին, որուն համար մասնաւոր յարգանք կը տածէր: Այս իսկ պատճառով քանի մը անգամ ներկայացած առիթներէն կամովին չուզեց օգտուիլ, անոր համար որ Մուրատ Էֆէնտիին իր հետը պիտի չըլլար: Ուստի ծակեց առաստաղը, նորօրինակ բայց ապշեցուցիչ միջոցով մը հեռախօսի հաղորդակցութիւն մը հաստատեց Մուրատի հետ.. մանկութենէն սորված էր թէ լուցկիի մը երկու տուփերու միջեւ թել կապելով՝ կարելի էր խօսակցութիւն կատարել մօտաւոր հեռաւորութեան մը վրայէն: Այդպէս ալ ըրաւ:

Սակայն Մուրատ կը յամառէր մերժել ամէն առաջարկ: Գէորգը՝ յուսահատութիւնը հոգւոյն մէջ, համոզուեցաւ որ պնդելն ու աղերսելն անօգուտ էր վերջապէս:

1897ի Ապրիլի 7-ն էր. ամէն ինչ պատրաստ՝ յանդուգն եւ գերագոյն փորձը հարկաւոր էր: Այդ իրիկուն բարեբախտաբար սարսափելի փոթորկալից եւ ձիւնախառն անձրեւի պատճառով, թանձր մութ մը տիրեց: Գէորգը կապեց մէջքին պարանը, գոր ինքը հիւսած էր իր ձեռքով, (մարդ չի գիտեր ի՞նչպէս եւ ,ուրկէ՞ ձեռք ձգած էր այժի մազը), ու օձի պէս սողաց բարձրութենէն վար, ընկերները վարը կը սպասէին արդէն: Բանտին պահակը՝ մութին մէջ մարդկային սիւնէրներ գանազանելով՝ հարցուց սպառնաձայն:

Ո՞վ էք դուք:

Ճամբորդներ:

Ու միամիտ պահակը՝ քաշուեցաւ իր անկիւնը, ինքզինք պատսպարելով երկինքէն իջնող հեղեղէն:

Համաձայն նախապէս ծրագրուած որոշման՝ փախստականները բաժնուած երկու խումբի՝ բռնեցին երկու տարբեր ճամբաներ եւ Տ... գիւղի քարայրին մէջ վերստին միացան իրարու: Անկէ անդին Սասունն էր:

Փրկութեան լուրը երբ հասաւ սարը, արդէն մէկ քանի տարիէ ի վեր հոն բոյն դրած նոր հայդուկներ, նոր անձնուէրներ՝ ուրախութեամբ դիմաւորելու վազեցին վախստականները. Մուրատը չկար, բայց կար Գէորգը: Գէորգը՝ հակառակ իր բանտակից ընկերներուն, որոնք ընկճուած կ'երեւէին, վառվռուն եւ աշխոյժ էր. երկրորդ օրն իսկ հրացան կը վերցնէր ու գործի կը սկսէր:

Այս միջոցին էր որ Ապրօն ու Թովմասը հիւսի տակ թաղուած՝ խեղդուէր էին: Կը մնար Գէորգին՝ միացած քանի մը ընկերներու, շարունակել գործը, մինչեւ որ Անդրանիկն ու ընկերները կրկին վերադարձան Կովկասէն: 1898ին եկաւ նաեւ Գուրգէնը:

Նոր գործիչները ձեռնարկեցին ժողովուրդի զինման ու ինքնապաշտպանութեան դժուարին գործին, դիմաւորելով մէկ կողմէն ամէն քայլափոխի՝ կառավարութեան տեսական հալածանքը, դաւերն ու ծուղակները, մնալով անօթի, անպատսպար շատ անգամ, միւս կողմէն՝ ճեղքելով հաղորդակցութեան ճանապարհներ, ցնցելով ժողովրդին յուսահատ տրամադրութիւնը եւ կռուելով քիւրտերու, կեղեքիչներու եւ բազմագոյն, բազմատեսակ բռնաւորներու դէմ: Իւրաքանչիւր տեղեկութեան, իւրաքանչիւր ձեռնարկի, իւրաքանչիւր շարժման վիճակուած էր՝ քիւրտի, թիւրքի, մատնիչներու կամ զօրքի հետ ճակատ-ճակատ անխուսափելի ընդհարում մը:

Վրայ հասաւ Սերոբի եղեռնական ու խուժուժ մահը, գեղաշէնցի Աւոյի ու իր մեղսակիցներուն անորակելի դաւաճանութեամբը:

Կառավարությունը այս վատ յաղթանակովը քաջալերում՝ ուժեղացուց հալածանքը եւ արդէն կարծեց բողոքի անընկճելի ոգին մահացուցած ըլլալ: Անդրանիկի, որ կը վարէր Մերոքի գործը եւ Գէորգի ու ընկերներուն համար սկսան ամենէն ցաւագին ու դժնդակ օրերը. թափառական լեռնէ լեռ, ձորէ ձոր, հեռու շէնլիքէ ու գիւղերէ, ստիպուած էին կորսնցնել ամէն հետք, ու չորս կողմէն սեղմող կրակի շրջանակի մը մէջ ապահովութեան առասպելական դղեակ մը գտնել: Կառավարական բոլոր սողուն զօրութիւնները՝ զօրք, թիւրք, քիւրտ եւ ամէն ազգի լրտեսներ ու մատնիչներ՝ կը հալածէին բուռ մը յեղափոխականները՝ որ անտեսանելի, սակայն ամենուրեք, կը մնային անհաս ու անպարտելի:

Երբ արդարութեան անողոք հատուցումը հասաւ հայ մատնիչներուն ու գեղաշէնցի Աւոյին՝ որ իր ամբողջ ընտանիքով բնաջինջ եղաւ, կը մնար վերջին դատաստանը Խալիլին, այդ հրէշածին պատուհասին՝ որ խմած էր Մերոքի ու հազարաւոր հայ գիւղացիներու արիւնը: Խալիլը ինքը պատմական չարիքն էր այդ սեւ երկրին, որուն նամուսը, մալը, միւլքն ու կեանքը իր կրունկներուն շուքին հետ ոտքին ետեւ կը պտըտցնէր:

Անդրանիկի ու Գէորգի ազատարար գնդակները անգամ մըն ալ սուրացին Մարնիկի վերելի սարին վրայ՝ յանուն տանջուած ժողովուրդի վրէժխնդրութեան:

Խալիլի սպանութիւնը ամբողջ շրջան մը կը բանայ Սասնոյ վերջին յեղափոխութեան համար՝ մինչեւ Առաքելոց վանքի պատմական գրաւումը:

Սասունը յեղաշրջուած էր. ինքնավստահութեան ու դիմադրութեան հոսանքը վերստին կը գրաւէր իր տեղը:

Բայց վարը, քաղաքն ու դաշտերը կը հեծէին երկայթէ մտրակին տակ. սպանութիւն, աւերում, հրդեհ, կողոպուտ, բռնաբարութիւն ու տանջանք, տանջանք... ժողովուրդը ծայրայեղ յուսահատութեան ու լքումի մէջ կը դիմէր դաւանափոխութեան, ռուսական եկեղեցիին գիրկը յուսալով ապահովութեան յենակէտ մը գտնել միայն: Կը զոհէր իրեն համար ամենէն նուիրական զգացումը, իր պապենական հաւատքը, միայն թէ գուլումը դադրէր եւ արեւին լոյսը քիչ մը արդարութիւն բերէր իր հետ տեղէ մը:

Ահա այս գերագոյն բռնութիւններն էր, որ ինչպէս արծիւը գորշ մրրիկներու մէջէն, Անդրանիկի ու Գէորգի խումբը խոյսցաւ Սասնոյ կապաններէն դէպի ցած, դէպի Առաքելոց վանքը, ցնցելու համար ժողովրդի գիտակցութիւնը:

Այս պատմական յանդուգն ու մեծ դէպքի միջոցին՝ երբ վանքը շաբաթներով պաշարուած էր զինուորական կուռ շղթայով մը, Գէորգը ցոյց տուաւ այդտեղ հիանալի ճարտարութիւն, աներկիւղ հերոսութիւն ու անձնուիրութիւն: Այս պաշարման միջոցին էր որ՝ գիշեր մը թշնամի բանակէն յոխորտալից ձայն մը կը հասնէր.

Ո՞ւր պիտի փախչիք մեր ձեռքէն, թէսլիմ եղէք, թէսլիմ եղէք:

Գէորգ քրտերէն լեզուով պատասխանեց հեզնօրէն.

Դո՛ւք, կնիկնե՛ր, որ պահուած էք դիրքերու ետեւ ու չէք համարձակիր ձեր մազը ցոյց տալ, դո՛ւրս եկէք, դո՛ւրս, ձեզ հաց ու ջուր տանք եւ հեռացէք, դուք ո՛վ, կռիւր ո՛վ...

Քիւրտ մը որ անկասկած կրցաւ ճանչնալ Գէորգի ձայնը՝ նոյնպէս հեզնօրէն արձագանք տուաւ:

Վա՛յ, դուն ես, Գէորգ Չաւուշ...: (Անդրանիկին անուան միացած փաշա յորջորջումին իբր լրացուցիչ մաս՝ Չաւուշն ալ Գէորգին, անուան):

Եւ այդ օրէն Չաւուշը մնաց պատմական անուն մը, աւելի ճիշդ յիշատակ մը:

Անմոռանալի էջ մը կը կազմէ ապահովաբար, այն դիւցազնական դրուագը զարհուրելի գիշերուան մը մէջ, երբ պաշարուողներուն յանկարծ իմաց տրուեցաւ թէ զօրքը յաջողած է մօտենալ վանքին եւ ներս խուժելու պատրաստուիլ: Գէորգը դուրս եկաւ քանի մը կտրիճներու հետ դէպի Հաւատորիկ եւ հազիւ փոխանակած տասնի չափ հրացան, թշնամին ետ քաշուեցաւ եւ մինչեւ վերջ որոշ հեռաւորութենէ մը առաջ չանցաւ:

Երբ հարկ եղաւ թողուլ վանքը եւ բարձրանալ դարձեալ լեռնային ապաստանները, ինքը անցած իր զինուորներուն զլուխը, ռազմական հրաշալի տաղանդով մը առաջնորդեց իրեն ղեկավարութեան յանձնուած կամաւորներու ընտիր խումբը եւ կտրեց անցաւ զինուորական շղթան, առանց ոչ մէկ կասկած տալու թշնամիին:

Անապասելի էր, գրեթէ գերբնական այս փախուստը, որ առասպելական գոյն առաւ եւ ֆէտայիները եղան անխոցելի եւ անըմբռնելի՝ ժողովրդային երեւակայութեան մէջ:

Տարօնի աչքը՝ սրբած յուսալքութեան արցունքն ու կսկիծը իր թարթիչներէն, հիմա կը դառնար դէպի վեր, դէպի բարձունքները՝ լեցուած յոյսով ու հաւատքի սպասումով, հիմա սրտանց կ'ողջունէր Սասունն ու անվախ ֆէտային:

Ժողովուրդը դուրս կու գար վիատութեան հեղձուկ խաւարէն եւ կը գտներ իր հոգւոյն խորը՝ դարձեալ ապրելու կամքը եւ պայքարին արիութիւնը՝ որ հասարակութեան մը գոյութեան իրաւունքը կը հաստատէ:

Առաքելոց վանքի դիմադրութենէն հազիւ երկու ամիս անցած էր, երբ Գէորգը մղեց Նորշէնի յաղթական կռիւր՝ երեք հայերու մատնութեան հետեւանքով:

Գէորգը իր մէկ քանի ընկերներուն հետ, որոնց մէջ նաեւ Կայծակ-Վաղարշակն ու Աստուրը, իջած էին դաշտ հարկեցուցիչ պարագաներու բերումով եւ կը գտնուէին Նորշէն: Երեք նորշէնցի այլասեռած կաթովիկ հայեր կ'երթան քաղաք, ուղղակի միութեսարըֆին քով, որուն հետ կ'ունենան հետեւեալ խօսակցութիւնը.

Փաշա՛ էֆէնտի, մեր գիւղը ինը ֆէտայիներ իջեւանած են, գորոնք կառավարութեան ձեռքը կ'ուզենք յանձնել:

Փաշան խոժոռ ու յօնքերը պոստած, ատելութեամբ մը կը նայի այս վատորդիներուն երեսին:

Գացէ՛ք, տեղերնիդ գացէ՛ք, կ'ըսէ բարկութեամբ, զինո՛վ հայեր, դուք այսօր խմած կ'երեւիք...

Չէ՛, էֆէնտիմ, ըստաղֆուրուլլահ, մեր գլուխը կու տանք, եթէ ըսածնիս սուտ ելլէ, փատիշահին արեւուն, Գեորգ Չաւուշն այս խնզըրներուն հետ է:

Միթէսարըֆը գլուխը կ'երերցնէ, ներքին խորունկ զգուանքով մը եւ կը պնդէ միշտ.

- Հայէ՛ր, դուք խմած էք, վալլահ՝ խմած էք, տեղերնիդ գացէք ու անկողիննիդ հանգիստ մը քնացէք:

Եթէ դուք մտիկ չէ՛ք ըներ, կը կրկնեն փատիշահին ստրուկները, մենք հեռագրով կը դիմենք վալիին ու հրաման բերել կու տանք...:

Զգուելի ստրկութիւնը՝ կ'անցնէր ամէն չափ ու սահման:

Շատ լաւ, կ'ըսէ միւթեսարիֆը, գացէք դուք, իճապին կը նայինք մենք... ու կը դիտէ այս մարդակերպ սողունները, որոնք ցածնալով, երկրպագելով՝ դուրս կու գան կառավարական պալատէն արդէն գոհ ու ինքնաբաւ:

Հիւսէյին աղա ըսուած հրէշը, որ ներկայ էր խօսակցութեան, կը գոչէ պարծենալով.

Ես պիտի երթամ եւ բերեմ այդ Գեորգ Չաւուշին գլուխը...

Առաքելոց վանքին վաղորդայնին էր եւ տակաւին տպաւորութիւնը շատ թարմ. պաշտօնէաները, չափազանց բուռն ու յախուռն կը գտնեն Հիւսէյինին ոգեւորութիւնը ու կ'ազդարարեն իրեն տեղը ծանր նստիլ, թողուլ եօթը աշխարհէ հաւաքուած ու պատանքը իրենց վզին փաթաթած ու այնպէս պտըտելու ելած այդ արկածախնդիրներուն օձիքը:

Խալիլ աղան աչքիդ առջեւ բեր, Հիւսէյին՝ աղա, կը խրատեն խոհեմները, ան Սերոբին գլուխը կտրեց, սակայն ժամանակ անցաւ ու անոնք ալ վերջապէս իրենը մարմնին վրայ կանգուն չթողուցին, այս մարդոց հետ իյնալը չէրի չէ...

Վլախի պիտի երթամ, այս իրիկուան իֆթարը ինծի հարամ ըլլայ, եթէ ես անոնց գլուխները չբերեմ...:

Եւ Հիւսէյինը բռնեց իր խօսքը: Տղաքը յանկարծ իմացան որ գեղը պաշարուած է եւ Գեորգի հրամանով անմիջապէս դուրս եկաւ առաջին խմբակը՝ զարնելու եւ ճամբայ բանալու:

Ճամբա՛յ, պոռացին ֆետայիները հեծեալ ոստիկաններու եւ խուժանային բազմութեան, որոնց առջեւ ձիուն վրայ կը սիգար Հիւսէյին աղան:

Եւ գնդակները սուլեցին օդին մէջ: Առաջին անվրէպ մահացու կապարը ծակեց Հիւսէյին աղայի ճակատն ու անցաւ դիակը ձիէն վար գլորուելով Մեղրագետի ալիքներուն մէջ հոսանքը քշեց տարաւ:

Բազմութիւնը ցրուեցաւ՝ ինչպէս մշուշը զօրաւոր քամիին առջեւէն. խումբին առաջապահ մասը բարձրանալով լեռն ի վեր, գրաւեց Օծմակայ քիթը: Երբ պաշարողները գլխիկոր ետ դարձան՝ Գեորգը իր ընկերներէն մէկ քանին սարը ճամբեց ու ինք իջնալով կատարեց իրեն յանձնուած պարտականութիւնը ու վերստին բարձրացաւ լեռը:

Այդ օրերուն կարծես չարիք մը անդադար կը հետապնդէր զինք: Հաւատորկաց Շէյխ-Նիստ գումերուն մօտ հանդիպեցան քիւրտերու, եւ հարկ եղաւ նորէն մղել աննպատակ կռիւ մը, ուրկէ յաղթական շարունակեց իր ճամբան:

Փոխադրութեան գործին վերահսկողութիւնը յանձնուած էր Չաւուշին, որուն համար հարկ էր, անդու ու անդադար տեղափոխութեան մէջ գտնուիլ, սարէն դէպի դաշտ ու դաշտէն դէպի սար: Չաւուշ տարիներով առանց վայրկեան մը հանգիստ առնելու, արհամարհելով յոգնութիւն ու ամէն տառապանք, եղած է մշտակայ գործունէութեան մը արթուն հոգին, եւ այս իսկ պատճառով ունեցած է միշտ բաղխում, միշտ ընդհարում՝ քիւրտին, թիւրքին ու իշխանութեանց հետ:

Իր մղած կռիւներուն կէսին կէսն իսկ բաւական էին պատերազմի դաշտին վրայ ունէ գօրապետի, ունէ հրամանատարի կուրծքը շքանշաններով զարդարել եւ անմահացնել կռիւներ՝ միշտ անհաւասար, ու հերոսական, մղուած կտրիճ ու զինավարժ ամենայայտնի ասպատակ քիւրտ ցեղերու դէմ. կռիւներ՝ կառավարական զօրքին ու ոստիկանութեան դէմ. կուրծք տալով ինը-տասը ֆետայիով՝ քանի մը հարիւր, յաճախ հազարէն աւելի թշնամիի դէմ, եւ յաղթական դուրս գալու, այո՛, հերոսի գործ էր:

Կը յիշատակենք հոս՝ ընդհանուր գծերով միայն, այն ճակատամարտները, որոնց մոռացութիւնը աններելի զանցառութիւն եւ նախատինք մը պիտի ըլլար անգուգական հերոսի յիշատակին:

Քաջութեան ու սխրագործութեան կոթողներ պիտի մնան՝ հայ ազգաբնակչութեան արիւնոտ ճամբարներուն վրայ, Բերդակի առաջին կռիւը, ուր մատնիչ Բարսեղի դաւաճանութեան հետեւանքով՝ Գեորգ պաշարուեցաւ Ալայպէյի հրամանատարութեան տակ գտնուող 200 ձիաւորներովը եւ դուրս եկաւ յաղթական ու անպարտելի, գնդակով մը Ալայ-պէյին ֆէսն ալ գլխէն թոցնելով: Բերդակի երկրորդ կռուին ուր, նոյնպէս մատնութեան մը շնորհիւ, լուսաբացին իր եօթը ընկերներով պաշարուեցաւ տան մը մէջ, սակայն առիւծի պէս խոյանալով իր զինուորներուն հետ, ճամբայ բացաւ ու բարձրացաւ դէպի սարը:

Փոքրիկ խումբը, աննման արիութեամբ, քայլ առ քայլ, դիրքէ դիրք կռուելով, հասաւ Հաւատորիկ. հոդ յանկարծ յայտնուեցան երկու ոստիկաններ՝ որոնք թելադրեցին հայ գիւղացիներուն զէնք վերցնել ու միանալ յարձակողներուն հետ, կոտորելու համար ֆետայիները. եւ ի՛նչ ստորնութիւն հայ արիւնին, գիւղացիներէն ոմանք զէնք բարձրացուցին ու կրակեցին յեղափոխականներուն վրայ: Գեորգ, տեսնելով կայէնական այս արարքը, սրտմտութեամբ ու անհուն զայրոյթով լեցուած՝ ձայն տուաւ տողոց, թողուլ բուն թշնամին եւ հրացանները ուղղել դաւաճաններուն վրայ: Կռիւը առած էր մոլեգին, կատաղի ուժգնութիւն, որովհետեւ քիւրտի ու զօրքի թիւը հասած էր արդէն 1000-էն աւելի: Բերդակէն միացած մէկ

քանի անգին երիտասարդներ՝ զբաղուած էին անդադար դիրքեր շինելու, մինչ եօթ կտրիճները թռչելով միշտ մէկ դիրքէն միւսը, ճակատ կու տային ընդարձակ տարածութիւն մը բռնած եւ հետզհետէ աճող, հազարէն աւելի թշնամիին ու մահ ու սարսափ կը ցանէին իրենց շուրջը: Հասան վերջապէս Ծիրին-Կատար: Հազիւ կէս ժամ եւս տեւեց կռիւը, երբ բնութիւնը օգնութեան հասաւ: Փոթորիկը սկսաւ ոռնալ եւ դղրդել սարերը, Ծիրին-Կատարը թափ կու տար իր գլուխը առիւծի պէս բաշերը ցնցելով, հսկայ լեռներու ահեղութիւնն էր որ կը զարթնէր, եւ կը մոնչէր որոտաձայն. այս տարերային գոռում գոչումին մէջ կը թնդային հրացանները անդադար եւ ֆիտայիները առաջ կը խաղային դէպի Կորեկի Աղբիւրը, ուրկէ անդին այլեւս ամէն ինչ լռեց եւ խումբը գտաւ իր ապահովութիւնը:

Թշնամին տուաւ 4 մարդ եւ 2 ձի գոհ ու բազմաթիւ վիրաւորներ, մինչ յեղափոխականներէն վիրաւորուեցաւ միայն սպառնաքցի Գալէն իր թելէն. Գալէն աննման, հրաշալի կտրիճը որ միշտ թիկնապահն ու անբաժան ընկերը եղաւ Գէորգին մինչեւ վերջը, մինչեւ մահուան յետին րոպէն ու անոր հետ կողք կողքի ինկաւ աղետալի օրուան մէջ:

Թշնամի խուժանը՝ որ Մուշէն դուրս եկած էր ծուղակը ինկած այդ եօթը ֆետայիներուն դիակները քաշելու իր ետեւէն քաղաքի հրապարակին վրայ, ետ դարձաւ գլխիկոր ու ամօթահար, տանելով հետը միայն իր գոհերն ու վիրաւորները:

1903-ի Սասնոյ զինուորական ժողովներուն մէջ Գէորգը ընտրուեցաւ Զինուորական Խորհուրդի անդամ եւ զինուորական երկրորդ հրամանատար. պաշտօններ, աւելի ճիշդը յեղափոխական պարտականութիւններ, որոնց կիրառմանը համար ուներ բոլոր առաքիլութիւններն ու արժանաւորութիւնները:

1908 թուականը՝ գործունէութեան այն տենդոտ շրջանը եւ ընդհանուր վտանգով, սպառնալիքով յղի այն տարին է, ուր արդէն բացորոշապէս զգալի էր կառավարութեան մտադրութիւնը եւ կատարելիք յարձակումը: Երկու ընդդիմադիր ուժերը՝ յեղափոխական ու բռնակալական՝ կը դիտէին զիրար ու կը լրտեսէին իրենց փոխադարձ շարժումները, իւրաքանչիւրը ինք անփոփոխելով իր վրայ, իւրաքանչիւրը սպասելով ազդանշանին:

Գէորգին յանձնուած էր Անտոքի պաշտպանութիւնը, ուր դիրքերուն մէջ կը հսկէին հայդուկներն ու ժողովուրդը: Պէտք էր կազմ ու արթուն ըլլալ՝ դիմաւորելու համար յանկարծական ամէն պատահար: Սակայն հակառակ բոլոր գուշակութիւններուն, թշնամին յետաձգեց իր մտադրութիւնը աւելի պատեհ հանգամանքի:

Աշնան սկիզբի ամիսներուն, Գէորգը պարտաւորուեցաւ իջնել դաշտ՝ հրահանգներ տալու, կարգադրութիւններ ընելու եւ դաշտի ինքնապաշտպանութեան գործը կազմաւորելու համար: Նոր բարձրացեր էր սարը, երբ վերջին ամիսներուն լուր հասաւ թէ Տալուրիկը վտանգի մէջ է: Աճապարեց անմիջապէս դէպի սիրելի Տալուրիկը, որուն պաշտպանութեանը համար այնքան անգամներ կռուած եւ իր կեանքի գնովը օգնութեան փութացած էր: Բարեբախտաբար ոեւէ լուրջ դէպք տեղի չունեցաւ եւ ինք թողուց Տալուրիկը ու գնաց ձմեռը Սասնոյ արեւմտեան հարաւային կողմերու հայ գիւղերուն՝ Իշխնձորի, Արդկունքի, Ընկուզնակի եւ Հեղինի պաշտպանութիւնն ապահովելու քիւրտերուն յարձակման դէմ: Այդ գիւղերուն բնական դիրքը

Եւ վերջնական ապահովութիւնը կը պահանջէին թողուլ իրենց վայրերը եւ քաշուիլ ներս, դէպի Սասուն: Չաւուշ հսկեց տեղափոխութեան եւ ապահով, անվտանգ յաջողցուց գաղթումը:

1904-ի Ապրիլին արդէն սկսաւ ընդհանուր յարձակումը եւ բռնկեցաւ Սասնոյ ապստամբութիւնը:

Չաւուշը ապստամբութեան առաջին օրերուն բռնած էր Իշխնձորի, Արդկունքի, ընդհանրապէս արեւմտեան հարաւի շրջանը եւ այդ դիրքերուն պաշտպանութիւնը կ'ապահովէր. բայց երբ լսեց որ Կէլիէկուզանի շուրջը թնդանօթները կ'որոտան, անմիջապէս քաշեց իր հետ բոլոր ժողովուրդը եւ վազեց դիմադրութեան կեդրոնը:

Կռիւի ութերորդ օրը, Ապրիլ 19-ին՝ Անտոքի դիրքերուն պաշտպանութեան գլուխը կանգնած էր: Հեռուէն արդէն քրտական խուժանը եւ կանոնաւոր զօրքը կը յառաջանար. հանդարտ ու պաղարիւն՝ թողուց թշնամին որ մօտենար, ո՛չ մէկ շարժում, ո՛չ մէկ հրացանի ձայն դիրքերէն: Թշնամին՝ բացարձակապէս համոզուած էր թէ իր մարդիկն են հոն սպասողները, համարձակ ու աներկիւղ մօտենալով իսլամական բարեւը տուաւ.

- Սէլամն ալէքիմ...

Այն ատեն հրացանները որոտացին:

Բարեւին պատասխան դիրքերուն ետեւին յեղափոխական գնդակները սուլեցին, մինչ Գէորգը յանկարծակիի եկած եւ փախստի դիմած չկայ թշնամիին ետեւէն կը պոռար.

Ո՞ւր, ո՞ւր կու գաք. Գէորգ Չաւուշին բո՞յնը...

Ապրիլ 11-էն մինչէւ 30, ուր անընդհատ գոռացին կառավարական թնդանօթները եւ կարկուտի նման ծեծեցին Սասնոյ սարերն ու ապառաժները, Գէորգը ո՛չ մէկ դադար, ո՛չ մէկ հանգիստ, ո՛չ մէկ շուարում ու երկիւղ ունեցաւ. վարեց իրեն յանձնուած խումբերը՝ զինուորական աներեւակայելի ճարպիկութիւնով, հասաւ ամենէն տաք ու ամենէն վտանգաւոր կռիւներուն եւ բիրաւոր զինուորին ու քիւրտ աշիրէթին դէմ, 19 օրուան հերոսական դիմադրութենէ մը ետք, Անդրանիկին հետ ժողովուրդին գլուխն անցած, դաշտ իջաւ:

Այդքան զօրութեան ունայն վատնումը մոլեգնութեան կը հասցնէր կառավարութիւնը՝ որ վարարած գազանի նման սկսաւ հալածել անըմբռնելի, բայց ահաւոր բուռ մը յեղափոխականները: Դաշտին մէջ յաջորդաբար իրարու ետեւէ տեղի ունեցած Գոմերի, Կուրաւուի եւ Շամիրամայ կռիւները, որոնցմէ երկրորդին մէջ թշնամին ձգեց 40 զինուոր ու չէրքէզ եւ բաւականաչափ ռազմամթերք: Շամիրամայ կռիւի միջոցին, որը տեւեց 14 ժամ, Գէորգը հակառակորդին ամենէն ուժեղ թեւին վրայ ցանեց այնպիսի ահարկու կրակ մը, որ թշնամին չկրցաւ տոկալ ու սառսափահար նահանջեց: Երեկոյեան մութը կռիւէն ետք արդէն քաջարի խումբը նաւ կը նստէր եւ կը հասներ Ադթամար:

Հայ Յեղափոխականներու, Նահանջ Բիւրոցնէ էր ասիկա, կատարուած, ժողովուրդի սիրոյն համար, քանի որ այլեւս դիմադրութիւնը ոչ միայն անօգուտ էր, այլեւ վնասակար՝ խաղաղ

բնակչության կեանքին ու գոյքին, նամերտ ու ամեն բարբարոսության տրամադիր կառավարությունը չկարենալով գլուխ գալ յեղափոխական կռուողին հետ, կը պատուհասէր անզէն զիւղացին եւ վրէժխնդրութիւնը կը յագեցնէր՝ այրելով արտերն ու կալերը:

Աղթամարի մէջ գումարուեցաւ վերջին Զինուորական Խորհուրդը... Հեռուն սեւ ճակատագրին ու վատ դուշմանին հետ մեն մինակ կը մնար դժբախտ, անտէր ժողովուրդը, նորէն կը չոքէր գերութեան մութ մառախուղը որբացած սարերու գագաթներուն եւ մայր հողին բազմաչարչար կուրծքին վրայ:

Խումբը կը հեռանար, բայց ոտքերը առաջ չէին երթար, սրտերը անդադար կը թռչէին դէպի ետ, դէպի Սասունն ու աւերակ Տարօնը:

Այդ յուզիչ Խորհուրդին մէջ էր որ որոշուեցաւ ընկերներէն մէկը ետ դարձնել, ե՛տ, դէպի ժողովրդին ծոցը զայն չմատնելու համար աւերիչ յուսահատութեան ու մահաբէր ջլատումի: Եւ այդ պարտականութիւնը սիրայօժար վերցուց իր վրայ Գեորգը՝ ինք, որուն սրտին արդէն այնքան մօտ էր որոշումը:

Երբ հաւաքած իր 17 ուղեկից ընկերները, վերջին անգամ ողջագուրեց Անդրանիկը, տասնեակ փոթորկալից տարիներու ամէն յուզումները, ամէն վրդովումները եւ բոլոր խռովքները ճաշակած այդ պողպատէ հոգին չկրցաւ սառնութեամբ դիմաւորել դառն բաժանումը եւ իր աչքերը թրջեցան արցունքներով: Բայց գաղափարը՝ աւելի թանկ ու սիրելի քան ընկերը, քան զէնքի անմոռանալի եղբայրը, առաջ վարեց զինք:

Հովուոյց առագաստները շտկուեցան դէպի Ախլաթ ու 17 կտրիճները անհետացան Վանայ կապոյտ ալիքներուն վրայ:

Հազիւ անհետ եղած էին անոնք, արդէն Աղթամարը պաշարուած էր ու կը սկսէր ոմբակոծութիւնը:

Կառավարութիւնը Շամիրամայ կռիւին իսկ յաջորդ օրը ամէն տեղ հեռագրած էր ծովը խիստ հսկողութեան ենթարկել եւ բանտարկել հանդիպած բոլոր նաւերը:

Գեորգ անտեղեակ թշնամիին կողմէ եղած այս կարգադրութեան՝ կը մօտենայ նաւով Կծուակայ քարերուն: Տղոցմէ մէկ քանին հազիւ ոտքերնին ցամաք դրած՝ զիշերային մթութեան մէջէն դարանամուտ թիւրք զօրքերը բռն կրակի մը կ'ենթարկեն զանոնք: Չաւուշ յանկարծակիի եկած, չի կորսնցներ սակայն իր մտքին կտրուկ վճռողականութիւնը եւ պաղարիւնութիւնը. կը հրամայէ տղոց շուտով առաջ անցնիլ եւ դիրք բռնել Կծուակայ քարերուն գագաթը: Հոս է որ պատուական, ամէն հիացումի արժանի ռազմիկ կամաւորները՝ զոհ տալով միայն մէկ ընկեր՝ Աստուրը, կը թռչին դէպի Նէմրութի լանջերը, թշնամիէն իւլելով բաւական թիւով զոհեր: Սերոբի այս պատմական օթեւանին՝ Նէմրութի սարերուն վրայ օր մը մնալէ ետք, կ'անցնին Մուշ:

Անլուր հարուածներուն եւ խստութեանց ենթակայ ժողովուրդը՝ որ ֆետայիներու մեկնումէն ետք, անձնատուր էր եղած սեւ անձկութեան, ծանր թախիծի ու մնացած ինք իր գլխուն,

անկարող ղեկավարելու իր բախտը, երբ իմացաւ Գեորգի ներկայութիւնը իր մէջ, իր քով ու իրեն մօտ, կրկին ունեցաւ սփոփանքի թեթեւ սարսուռ մը, կրկին իր հոգւոյն խորը զգաց յոյսի մը բաբախումը: Գեորգը հոն էր կեղեքիչներուն սարսափը:

1904-էն մինչեւ 1907, իր եղերական մահուան օրը՝ Գեորգի կատարած դերն ու գործունեութիւնը գուցէ ամենէն դժուարն ու դժնդակն է քան մնացած իր բոլոր գոհաբերութիւնները: Օր ըստ օրէ բռնութեան տակ ֆիզիքապէս ու նիւթապէս հիւժող ժողովուրդ մը՝ անխուսափելի կերպով կը դիմէր նաեւ բարոյական քայքայման. ոչ միայն քիւրտ ու թիւրք պէկերու, աղաներու եւ ասպատակողներու երկաթէ ձեռքը կը ծանրանար հայ աշխատանքին, հայ օճախին ու նամուսին վրայ այլէ նոյնիսկ ժողովուրդին ծոցէն կը վիժէին այլասերածներ, մատնիչներ ու կեղեքիչներ: Պէտք էր ազատել իրաւագուրկ եւ ուժաթափ տառապողները այդ ամէնուն ժանիքէն ու կլափէն. Իր պարտականութիւնն էր կռուիլ արտաքին ու ներքին բոլոր սողուններուն դէմ, որոնցմէ շատերուն գլուխը արդէն կըրցաւ ջախջախել: Յիշենք միայն ամենէն գլխատրներէն մէկը՝ մշեցի Քերիմ աղան՝ որ բռնութեամբ, բիրտ ուժով տիրացած էր Ալիճան Հայ գիւղի ամբողջ կէսին, գերութեան ու տարապարհակ աշխատութեան մատնելով ամբողջ գիւղացիները: Քերիմի չարաչար մահը փրկեց ոչ միայն Ալիճանը, այլեւ շրջակայ բոլոր հայ գիւղերը այդ զգուելի վամբիռէն:

Գեորգ մէկ կողմէն պատուհասելով չարագործները, միւս կողմէն իր իսկ ձեռքով նպաստներ բաշխեց, կարօտեալներուն, հասնելով հայ աշխատաւոր ժողովուրդին նիւթական ու բարոյական կարիքներուն միանգամայն՝ որքան կը ներէին իր ուժերն ու իր միջոցները:

Գուցէ այս անգուգական հերոսին բեղմնաւոր կեանքը տակաւին թերի գիծ մը, էապէս յեղափոխական պակաս մը ունենար, եթէ գոհողութեան բաժակը չորդէր, եթէ իր գարշելի տգեղութեանը մէջ չարտայայտուէր ապերախտութիւնը անոնց, որոնց նուիրեց ամէն ինչ, եւ երիտասարդութիւն, եւ խանդ, եւ արիւն, եւ կեանք: Եղան, այո՛, հայ գիւղերու ծոցէն իսկ դժնէ վատեր, որ փորձեցին քանիցս թոյնով վերջ տալ անոր անգին կեանքին:

Հալածական շարունակ վերջին երեք տարիներու ընթացքին, չունենալով ո՛չ մէկ հանգստի օր, ո՛չ մէկ հանգստի րոպէ, ո՛չ մէկ խաղաղ քուն, բռնադատուեցաւ, ակամայ Խարսի եւ Ալվառիճի մէջ մղել երկու կռիւներ անպատկառ թշնամիին դէմ, առաջին կռիւին գոհ տալով Եղօն՝ ճահիճներու մէջ եւ երկրորդին՝ բոլոր իր ընկերները, անվտանգ մնալով ինքը միայն:

Ընկերներու բոլոր թախանձանքը ի գո՛ւր անցաւ՝ դուրս բերելու համար զինք, ատենուան մը համար, երկրէն ուր արդէն առարկայ դարձած էր կառավարական բուռն հետամտութեան ու անխնայ հալածանքի: Ինք իր անձէն աւելի թանկ կը գնահատէր ժողովուրդին ցան ու տառապանքը եւ այս պատճառով հսկեց այդ ցաւին ու տանջանքին, կռուելով անոնց պատճառներուն դէմ տեւականապէս ու առանց զինադադարի:

Հասաւ վերջապէս սեւ օրը, Մայիսի 27-ը: Ռուբէնի ու 17 ընկերներու հետ իջած էր Մուլուխ ստիպողական գործի մը առիթով, ուր հանդիպեցան նաեւ երկու թիւրքեր, բարեկամ ճանչուած մինչեւ այն ատեն ու վստահելի:

Քանի մը ժամ չէր անցած թիւրքերու մեկնումէն, երբ գիւղը պաշարուեցաւ ոստիկաններով ու զօրքով: Մուլուխը յայտնի է իր հարթ, ռազմական ամէն դիրքէ ու յարմարութենէ զուրկ հանգամանքովը: Անխուսափելի կռիւր սկսաւ: Գէորգ Չաւուշ իր ծանօթ յանդգնութեամբն ու խիզախումովը դուրս եկաւ գիւղէն՝ յարձակելու ահագին բազմութեան մը վրայ ու ցրուելու գայն: Անկարելին կը փորձէր: Դեռ կռիւին սկիզբն իսկ՝ չքնաղ հերոսը զարնուած ինկաւ արդէն: Սպաղանքցի Գալէն, նոյնքան առիծասիրտ կտրիճ մը եւ վաղօրեայ զինուոր, որ անբաժան ու կարծես երդուեալ ընկերն եղած էր Գէորգին, մասնակցելով անոր հետ կողք կողքի բազմաթիւ հերոսական պայքարներու՝ տեսնելով խաւարումը Տարօնի արեւուն, առաջ նետուեցաւ ինքն ալ՝ վրէժխնդրութեան մոնչիւնը շրթունքներուն վրայ, բայց ճակատագրական գնդակը փռեց զինք ալ գետին, եւ անբաժան տարիներու գաղափարական ձգտումին ու ազատութեան մարտնչողներուն մէջ, անբաժան ու հաւատարիմ մնացին նաեւ երկու քաջերը մահուան իրենց ուխտին մէջ ալ:

Սասունը՝ հերձելով իր ժայռոտ կողերուն կրանիթէ արգանդը՝ վրէժխնդրութեան ու փառքի օրուան մը մէջ Ազատութեան ու Արդարութեան դժնդակ պայքարին իբրեւ հատուցում դուրս ժայթքած էր այս մրրկաթեւ Ասպետը, որ երբեք չգիտցաւ ամօթաբեր ընկրկումը:

Դժուար եւ անհնար է քանի մը էջերով եւ թռուցիկ տողերով զծել կեանքը մեծ Նահատակին որ, անսահման անձնուիրութեամբ ու ապշեցուցիչ համարձակութեամբ մը, 18 տարի առանց զենքը վար դնելու, մղած է քառասունէն աւելի կռիւներ յաղթական եւ հիանալի: Իր վեհանձն հոգին՝ անողորմ ու անսիրտ բռնաւորներու առջեւ եւ աղաւնիի պէս քաղցր իր ամենօրեայ կեանքին ու ընկերական վերաբերմունքի մէջ՝ չէ ճանչցած ո՛չ մէկ փառասիրութիւն բացի զէնքի յաջողութենէն: Այդ տարօրինակ հոգին տասնեակ տարիներ մշտական սարսափն եղաւ ժողովրդի բոլոր բռնաւորներուն, միւս կողմէն անսահման ժողովրդականութիւնն ու պաշտամունքը իր ետեւէն քաշեց: Որովհետեւ, իտէալը՝ որ առաջնորդեց իր կեանքը, այնքան սուրբ ու նուիրական էր որքան իր սիրած ժողովուրդին տանջանքն ու թշվարութիւնը:

Հաւատքը՝ յեղափոխական դիմադրութեան ու նուիրում ժողովրդական դատին, ահա այն նշանաբանը՝ որուն մշտեռանդ հետեւեցաւ իր ամբողջ կեանքի ընթացքին եւ որուն բոպէ մը չմտաբերեց դաւաճանել: Անիկա կեցաւ կրկեսին մէջ՝ աղեղը ձեռքին ու կապարճը ուսին, կեցաւ՝ ինչպէս սպարտացին իր հայրենիքի նուիրական պարտականութեան զլուխը, եւ ինկաւ՝ ինչպէս օրինապահ եւ քաջարի զինուոր:

Ու վստահաբար Առաքելոց վանքին մօտ, դէպի Սասուն տանող առաջին ճամբուն վրայ սգաւոր Տարօնը յարգանքով ու հիացումով ծունկի եկած անոր մահարձանին առջեւ, հոն պիտի գրէ դողդոջուն ձեռքերով.

,Անցորդ, գնա պատմէ Հայաստանի զաւակներուն, որ իր օրէնքներուն հնագանդելու համար ինկանք այստեղէ:

Նախորդ էջ Բովանդակութիւն Յաջորդ էջ

ԳԷՈՐԳ ՉԱԻՈՒՇԻ ՆԱՄԱԿԸ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ ԵՒ ՄՈՒՐԱՏԻՆ

Միրելի Պարոյր1 եւ Մուրատ.

Ես որոշուեցայ որ պիտի գայի արտասահման ու ներկայանայի [Ընդ]հանուր ժողովին, սակայն բաղդը չօգնեց որ գայի եւ ներկայանայի այն ազնիւ ժողովին, եւ տեսնուի ձեր սիրելութեան ու շատ մը ընկերն[եր]ի, այն պատճառաւ որ ձիւնի բուքի արգելքներ չթողին որ գայի եւ հասնէի: Ինչպէս օր մը օրերէն քիւրտ վալատի մը հետ մեկնուեցայ որ գայի. հասանք մինչեւ Կուլէի Պորագան2. հոն սկսեց սաստիկ ձիւն, եւ բուքի բռնուելով ետ վերադարձանք: Բայց խեղդուելէն հազիւ հազ ազատուեցանք: Մենք 7 ձիւնորով, ճարահատ մնալով վերադարձանք կրկին Դուրանում3, շատ մը ...երով(?):

Ընկերներ, ժողովին համար՝ երբ որ ես բաղդ չունեցայ գալ եւ ներկայանալ այն ազնիւ ժողովին, բայց ձայնս տուի ձեզի որ ներկայանաք ժողովին եւ մեր կողմանէն խօսիք եւ ծանուցումներ տաք Երկրի մասին, ինչպէս ալ որ գրած եմ Արեւելեան Բիւրոյին, որ դուք պէտք է ներկայանաք ժողովին եւ խօսիք մեր ու Երկրի մասին, թէ Երկիր ինչ է պահանջում, բայց չուրանաք(?) զձեր Աստուած եւ գէթ Երկիրը ինչպէս ուրացել էք մինչեւ ցարդ. թէ ինչպէս Բարձրաւանդակ4 ու Տարօն, որ ամենէն աշխատող ու գործ տեսնող եւ շատ մը զոհեր տուող շրջանն է, նրա տրամադրութեան ներքոյ ոչ մի դրամ չկայ, իսկ Շամի տրամադրութեան ներքոյ կայ 80000 ռակի, նաեւ կայ 100000ից աւելի ծայրեր. իսկ մերը՝ ոչինչ. ո՞ւմ երեսէն, ձեզի պէս ընկերների երեսէն որ թողեցիք զմեզ եւ զԵրկիր Աստծու կրակի մէջ ու գնացիք5, ոչ դրամ ոչ էլ ռազմամթերք դրկեցիք, զմեզ եւ զձեր ժողովուրդը թողեցիք ձեզ անիծող: Ինչ որ է, այն անցաւ, բայց այսուհետեւ կ'աշխատէք որ դուք ալ եւ մենք մարդ լինենք, Երկրով միասին:

Եղբայրք ճան, խնդրեմ լաւ աշխատէք որ օգուտ մը հասցնէք այստեղի ժողովրդեան եւ գործին, որ ազատուէք նրանց մեղքէն:

Համբոյրներով՝

ՍԱՐՀՍՏ

1 Անդրանիկի կուսակցական ծածկանունը

2 Կրնայ ըլլալ նաեւ Կալէէ Պարագան կամ Կալէ Պարագին:

3 Տարօնի շրջանը:

4 Մասուն

5 Կ'ակնարկէ Անդրանիկի, Մուրատի եւ միւս հայդուկապետներու արտասահման մեկնումին, Սասնոյ ապստամբութենէն ետք:

ԳԷՈՐԳ ՉԱԻՈՒՇԻ ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

25 Նոյեմբեր 1906
ԲԻՒՐԱԿՆ

Արեւելեան Բիւրոյին.

Նոյեմբեր ամսոյ 4-ին ընկեր մըն ալ հետս՝ եկայ Բիւրակն եւ պիտի գայի արտասահման, հասնէի [Ընդ]հանուր ժողովին, բայց ձիւնի բուքի պատճառաւ արգիլուեցայ 15 օր Բիւրակն, եւ օր մըն ալ քուրդ վալասի հետը միասին մեկնուեցանք որ պիտի գայինք. եւ հասանք մինչեւ Կուլէի Պարագան(?). այստեղ սկսեց ձիւն գալ, սաստիկ քամի եւ բուք, ճար չգտնելով ետ վերադարձանք. բայց խեղդուելէն հազիւ հազ ազատուանք. անկէ զկնի աշխատեցայ Բարձրաբերդի¹ գծով գալ ծպտեալ, սակայն ոչ ոք յանձն չառաւ զիս տանելու. եւ ինչպէս ալ Բիւրակնի² ընկերներ գրած են, ճարահատ մնալով ետ վերադարձայ դէպի Դուրանում, շատ ցաւալով, որ բաղդ չունեցայ գալ եւ ներկայանալ ձեր ազնիւ ժողովին: Սակայն խնդրում եմ որ զմեզ այստեղ մտահան չանէք. արդէն գրած ենք զբոլոր Երկրի անց ու դարձը եւ Երկիր ինչ պահանջելը. նաեւ շատ մը գաւառների տեղեկագրները որ ստանում էք. կարդալով պիտի հասկանաք զմանրամասնութիւնը:

Գալով ժողովի առթիւ երբ ես չկարողացայ գալ, ես այստեղէն տալիս եմ ձայնս Պարոյրին եւ Մուրատին, որ նրանք լաւ ծանօթ են Երկրի դիրք եւ դրութեան, եւ արդէն մենք պարգած ենք զամէն մի հարցը Երկրի գործունէութեան մասին:

Իմ վկայական էլ դրկեցի. եւ իմ որոշուած անձերը որ որոշած եմ եւ ձայնս նրանց տուած եմ. լի յուսով եմ՝ պիտի ընդունէք, եւ զմեզ ալ պիտի ճանչնաք իբրեւ ընկեր, եւ ապստամբավայր՝ տեղը:

Համբոյրներով՝

ՍԱՐԶԱՏ

1 Կարնոյ:

2 Նամակի ձեռագրով, այս տեղանունը, կարելի է կարդալ Բերակ, Բիրոկ եւն: Պետք է ըլլայ Բիւրակն (Պինկէօ), ինչպէս կը հետեւցուի ի մասնաւորի Տատրակի (Սշոյ Գեղամի) նամակէն:

Նախորդ էջ Բովանդակութիւն

Copyright: YEREVAN STATE UNIVERSITY - ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ